

# ՏՂԱՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԹԵՐԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ԳԼՈՒԲԱԼ ԾՐԱԳԻՐ

ՏԵՂԵԿԱԳԻՐ  
2018 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Հայաստան

## 1 ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐ

Հայաստանում արու գավակ ունենալուն արտահայտված նախապատվություն է տրվում: Այս նախապատվությունը, գումարվելով հղիության վաղ շրջանում պտղի սեռը պարզելու տեխնոլոգիաների մատչելիությանը, հանգեցրել է նորածինների սեռերի միջև բնական հավասարակշռության խախտման: Դրությունը բարդացրել է ծնելիության մակարդակի անկումը: Հայաստանում ծնելիության գումարային գործակիցը 1990-ականների սկզբի՝ մեկ կնոջ հաշվով միջինը 2,62 երեխայից նվազել է մինչև այսօրվա 1,6-ը:

Ծնունդների կենսաբանորեն բնականոն սեռային հարաբերակցությունից (102-ից 106 տղա՝ 100 աղջկա հաշվով) շեղումը Հայաստանում ակնհայտ դարձավ 1990-ականներից սկսած: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տվյալների, վաղ 2000-ականներին հարաբերակցությունը հասավ 120 նորածին տղայի՝ 100 նորածին աղջկա հաշվով: Ցուցանիշը կայունացավ 2010-ականների սկզբին՝ 114 տղա/100 աղջիկ մակարդակում:

Կառավարության և զարգացման գործընկերների, այդ թվում՝ միջազգային և տեղական կազմակերպությունների համատեղ իրականացրած լայնածավալ աշխատանքների արդյունքում, նորածինների սեռերի հարաբերակցությունը (ՆԱՀ) նվազել է՝ 2016 թ.-ի դրությամբ դառնալով 111 տղա՝ 100 աղջկա հաշվով: Ընդ որում, ԱՎԾ 2017 թ. առաջին վեց ամիսների տվյալների համաձայն, ցուցանիշը բարելավվել է՝ կազմելով 110 տղա՝ 100 աղջիկ: Այդքան կարճ ժամանակամիջոցում նման նվազումն, անկասկած, վկայում է հաջողության մասին: Այդուհանդերձ, Հայաստանում ՆԱՀ-ը դեռևս շեղված է կենսաբանորեն բնականոն մակարդակից:

### Կառավարության գործողությունները

Հայաստանի կառավարությունն ընդունում է տղաներին տրվող նախապատվության և սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության հետևանքով նորածինների սեռերի խախտված հարաբերակցության խնդրի առկայությունը: 2014 թ.-ին կառավարությունն ընդունեց սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության և սեռով պայմանավորված աբորտների կանխարգելմանն ուղղված միջոցառումների ընդունման անհրաժեշտությունն ընդգծող առաջին որոշումը:

- «Այն, որ ընտանիքները
- նախընտրում են տղաներ ունենալ, քրոնիկ խնդիր է, որը միանգամից լուծել չի լինի: Մենք պետք է երկար աշխատենք դրա համար»:
- Գայանե Ավագյան, ՀՀ առողջապահության
- նախարարության մայրական և վերարտադրողական առողջության
- պահպանման բաժնի պետ

Նպատակ ունենալով կանխել պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրությունը, կառավարությունը 2015 թ.-ին մշակեց և հաստատեց ծրագիր (2015-2017 թթ.), որին հաջորդելու է այժմ նախագծման փուլում գտնվող նոր՝ 2018-2022 թթ. ծրագրով:

2016 թ. հունիսին Ազգային ժողովն ընդունեց սեռով պայմանավորված աբորտների արգելման վերաբերյալ կառավարության ներկայացրած օրենսդրական փոփոխության փաթեթը: Այսպիսով, Հայաստանի կառավարությունը հաջողությամբ կատարում է պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1829 բանաձևում տեղ գտած իր միջազգային պարտավորությունները:

### Փաստերից բխող քարոզչություն

ՄԱԲՀ-ն, օժանդակելով կառավարությանը և քաղաքացիական հասարակության գործընկերներին, ծավալում աշխատանք է կատարել խնդիրը բացահայտելու և ուսումնասիրելու ուղղությամբ, լայնամասշտաբային լուսաբանում ու քարոզչությունը, դաշինքների ձևավորումն ու փորձագիտական օժանակություն տրամադրումը: ՄԱԲՀ-ի նախաձեռնությամբ, կառավարությունը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը,

1 ԱՎԾ, [https://www.armstat.am/file/article/sv\\_12\\_16a\\_520.pdf](https://www.armstat.am/file/article/sv_12_16a_520.pdf)



կրոնական կազմակերպությունները, միջազգային դոնոր կազմակերպությունները և լրատվամիջոցները միավորվել են խնդրի հաղթահարման շուրջ: 2016 թ.-ին ՄԱԲՀ հայաստանյան գրասենյակը, Հայաստանում պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության դեմ իրականացրած աշխատանքի համար, հաղթող ճանաչվեց «ՄԱԲՀ լավագույն գործելակերպ քարոզչության, քաղաքակրթությունների առումով երկխոսության/խորհրդատվության բնագավառում» գլոբալ մրցույթի «Նորահայտ գործելակերպ» անվանակարգում:

## Տղաներին տրվող նախապատվությունը

Տղաներին տրվող նախապատվության բուն պատճառների բացահայտումը կարևոր քայլ է աղջիկների ու կանանց նկատմամբ խտրականության վերացմանը նպաստելու և այնպիսի հասարակություն ձևավորելու համար, որտեղ կանանց ու տղամարդկանց համար կապահովվեն հավասար իրավունքներ և հնարավորություններ:

Սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրությանը նպաստում են երեք նախապայմաններ<sup>2</sup>.

1. Տղաներին տրվող նախապատվությունը
2. Սեռի ընտրության տեխնոլոգիաների առկայությունը
3. Ծնելիության անկումը

Հայաստանում առկա են բոլոր երեք նախապայմանները:


Հետազոտություններով ստացված տվյալները<sup>3</sup> հնարավորություն են տալիս վեր հանել տղաներին տրվող նախապատվության պատճառները՝

- տղան տոհմը շարունակողն է
- տղան ունեցվածքի ժառանգորդն է
- տղան հայրենիքի պաշտպանն է
- տղան ընտանիքի նյութական բարեկեցության երաշխավորն է
- տղան անձնավորում է հեղինակություն և ուժ:

Արու զավակին տրվող նախապատվությունը և տղաների ծնունդը կապված են սոցիալական, մշակութային և տնտեսական օգուտների հետ: Հետազոտության<sup>4</sup> համաձայն, ամուսնանալիս երեխաների ծրագրած թվի առումով կանանց գրեթե կեսը (46%) նախընտրել է ունենալ «մեկ տղա և մեկ աղջիկ», որին հաջորդել է «երկու տղա և երկու աղջիկ» տարբերակը (14%), իսկ կանանց 13,8%-ը երեխաների թվի կամ սեռի հարցում նախընտրություն չի ունեցել:

Սեռի նախընտրության վերաբերյալ 2011 և 2016 թթ. տվյալները համեմատելիս, աղջիկներին տրվող նախապատվության առումով նշանակալի փոփոխություն չկա: Փոփոխություններ նկատվում են տղաներին տրվող նախապատվության առումով՝ արու զավակ ունենալու ցանկություն հայտնած ընտանիքների տեսակարար կշիռը 45,3%-ից նվազել է մինչև 12,9% (Գծապատկեր 2):

## Գծապատկեր 1. Տղաներին տրվող նախապատվության պատճառները, 2011<sup>5</sup>



- Տնտեսական հիմնավորումներ
- Ուժ, հեղինակություն
- Անվտանգություն
- Տոհմի շարունակություն

Դրական է նաև ընտանիքում տղային և աղջկան տրվող հավասար նախապատվության աճը՝ 47,3%-ից (2011 թ.) մինչև 82% (2016 թ.): Սա կարող է տղաների և աղջիկների համար ավելի հավասար հնարավորությունների խթան դառնալ: Այն նաև նվազեցնում է գենդերային անհավասարությունը:

## Նորածինների սեռային հարաբերակցությունը և կանանց ամուսնական կարգավիճակը

Ըստ դիտարկումների, երբ երեխայի ծնունդը գրանցում է հայրը, նորածինների սեռային հարաբերակցությունը կազմում է 116,8 տղա՝ 100 աղջկա դիմաց: Երբ երեխայի ծնունդը գրանցում է մայրը (ինչն, ամենայն հավանականությամբ, լինում է միայնակ մայրերի պարագայում), նորածինների սեռերի հարաբերակցությունը կազմում է 106,3 տղա՝ 100 աղջկա դիմաց, ինչը սեռերի բնականոն հարաբերակցության միջակայքում է<sup>6</sup>:

## Հղիության ելքը սեռի որոշումից հետո

Նախաձննդյան սեռորոշման ծառայությունը մատչելի է կանանց մեծամասնության համար<sup>7</sup>: Սեռորոշումից հետո կանանց գերակշիռ մեծամասնությունը (97%) պահպանում է հղիությունը, իսկ 3%-ը դիմում է հղիության արհեստական ընդհատման: Անձնական և առողջական հարցերի հետ կապված որոշումների կայացման վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ հետազոտությունն անցած կանանց մեծամասնությունը (80%) որոշումը կայացնում է ինքնուրույն:

2 Guillmoto (2013թ.), Ծնունդների սեռային անհամաչափությունը Հայաստանում:

3 ՄՁՄԿ (2017), Չեկույց. Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում:


4 ՄՁՄԿ (2017ա):

5 ՄՁՄԿ (2017ա):

6 ՄԱԲՀ հայաստանյան գրասենյակ (2013թ.), համառոտ տեղեկագիր «Ծնունդների սեռային անհամաչափությունը Հայաստանում»:

7 ՄՁՄԿ (2017ա):

## Գծապատկեր 2. Սեռին տրվող նախապատվո թյո նները 2011 և 2016 թթ.<sup>8</sup>



### Տղաների նախապատվության փոփոխությունները

Ծնունդների սեռերի հարաբերակցությունը փոխվում է ծնունդի կարգի հետ: Ընտանիքում երկու երեխայից մեկի տղա լինելը սովորաբար բավական է, որպեսզի հայաստանյան ընտանիքներն իրենց վերատարադրողական մտադրությունները համարեն իրականացած: Սեռերի հարաբերակցության նշանակալի անհավասարակշռություն դիտարկվում է երրորդ և հաջորդող երեխաների դեպքում: Երեք և ավել երեխաներ ունեցող ընտանիքներում որդիների և դուստրերի բաշխման պատկերը հետևյալն է՝ 56% տղա և 44% աղջիկ երրորդ ծնունդների և 53% տղա ու 47% աղջիկ չորրորդ ծնունդների պարագայում<sup>9</sup>:

### Մարզային տարբերություններ

Հայաստանի բոլոր մարզերում կանայք առաջին երեխայի դեպքում ակնհայտ նախապատվություն են տալիս արու զավակին: Այդ նախապատվության առավել բարձր ցուցանիշներ գրանցվել են Վայոց ձորում, Արարատում, Շիրակում և Լոռիում: Տղաներին տրվող նախապատվությունը համեմատաբար ցածր է Երևանում ու Սյունիքի մարզում, որտեղ կանանց մեծ մասի (համապատասխանաբար՝ 61,6% և 62,4%) համար առաջին երեխայի սեռը նշանակություն չունի:

Ընտանիքներում սեռի նախապատվությունը փոքր-ինչ փոխվում է կախված բնակավայրից (քաղաքային, գյուղական): Գյուղական վայրերում տղաներին նախապատվություն տվող ընտանիքները երեք անգամ գերազանցում են աղջիկներին նախապատվություն տվող ընտանիքներին (16,1% և 5,2%): Քաղաքներում տարբերությունը երկու անգամ է (11,2% և 5,2%):

Ընտանիքներում արու զավակի նախապատվության վերաբերյալ ըստ մարզերի առանձնացված տվյալները վկայում են, որ այդ ցուցանիշը ամենաբարձրն է Արմավիրում, Արագածոտնում և Տավուշում (համապատասխանաբար՝ 20%, 18,2% և 16,7%), իսկ դուստրերին տրվող նախապատվությունը ամենամեծն է Սյունիքում, Տավուշում և Արմավիրում (համապատասխանաբար՝ 8,6%, 8,3% և 7,9%):

Երեխայի սեռի նկատմամբ համեմատաբար հավասար վերաբերմունքն առավել տարածված է Լոռու մարզում, որին հետևում են Երևանն ու Գեղարքունիքը (համապատասխանաբար՝ 86,8%, 85,9% և 84,4%)<sup>10</sup>:



### ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՔՆԵՐ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանը Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (ԿԻՔՉՎԿ) վավերացրել է 1993 թ.-ին: ԿԻՔՉՎԿ-ն հստակ սահմանում է խտրականությունը և մատնանշում է հասարակության մեջ անհատական ու քաղաքացիական առավել հավասարակշռված իրավունքներ ստեղծելու անդամ պետությունների պարտավորությունները: Հայաստանը ստորագրել է նաև Բնակչության և զարգացման հիմնահարցերին նվիրված միջազգային խորհրդածողովի (ԲԶՄԽ) գործողությունների ծրագիրը և, որպես այդպիսին, հանձն է առել վերացնել աղջիկ երեխաների նկատմամբ խտրականությունը՝ ներառյալ տղաներին տրվող նախապատվությունը:

Հայաստանի կառավարությունը նշանակալի ջանքեր է գործադրել կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները լիարժեք կատարելու և ազգային օրենսդրությունը համապատասխանեցնելու համար:

8 ՄՁՄԿ (2017թ), Սեռի հատկակիշտվ երեխայի խտրական ընտրության կանխարգելման նպատակով վաղ մանկության շրջանում երեխայի խնամքի և զարգացման ծառայությունների ընդլայնման պետական քաղաքականության բարեփոխումների ծախսերի և իրատեսականության վերլուծություն:

9 ՄՁՄԿ (2017ա):

10 ՄՁՄԿ (2017ա):

# Աղյուսակ 1. Ազգային օրենսդրություն և ազգային քաղաքականություններ ու ռազմավարություններ

Ազգային օրենսդրություն	Ազգային քաղաքականություններ ու ռազմավարություններ
Հայաստանի Հանրապետության սահմանադրություն (ընդունվել է 1995թ.ին, փոփոխության է ենթարկվել 2015թ.ին)	Գործողությունների ազգային ծրագիր կանանց կարգավիճակը բարելավելու և նրանց դերը հասարակության մեջ բարձրացնելու նպատակով (2004–2010թթ.)
ՀՀ օրենքը քաղաքացիության մասին (1995թ.)	ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգ (2010թ.)
ՀՀ ընտրական օրենսգիրք	Մարդու իրավունքների պաշտպանության գործողությունների ծրագիր 2014–2016թթ. (2014թ.)
ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004թ.)	Գենդերային քաղաքականության 2011–2015թթ., ռազմավարական ծրագիր և ընդդեմ գենդերային բռնության ռազմավարական միջոցառումների ծրագիր (2011–2015թթ.)
ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (5-ը մայիսի, 1998թ.)	Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման պետական ծրագիր 2015–2017թթ., ներկայումս կազմվել է նոր ծրագիր 2018–2022թթ. համար
ՀՀ օրենքը քաղաքացիական ծառայության մասին (2001թ.)	Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր 2007–2015թթ. համար (2007թ.) և Վերարտադրողական առողջության բարելավման նոր ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր 2016–2020թթ. համար
ՀՀ ընտանեկան օրենսգիրք (2004թ.)	Երեխաների և դեռահասների առողջության ու զարգացման ազգային ռազմավարություն, 2016–2020թթ.
ՀՀ օրենքը մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին (2002թ.)	Գենդերային հավասարության 2018–2022թթ. ռազմավարությունը և Գործողությունների ծրագիրը 2018–2022թթ. համար մշակման փուլում են
ՀՀ օրենքը բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին (1996թ.)	Երեխայի իրավունքների պաշտպանության 2017–2021թթ. ռազմավարական ծրագիր (2017թ.)
ՀՀ օրենքը կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին (2013թ.)	
ՀՀ օրենքը ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին (2018թ.)	

## 3 ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քարոզչական և իրազեկման ծավալուն աշխատանքները հանգեցրել են սոցիալական նորմերի փոփոխության: Կարճ ժամանակահատվածում Հայաստանին հաջողվել է նվազեցնել նորածինների սեռային հարաբերակցությունը՝ 2000-ականների սկզբի 100 աղջկա հաշվով 120 տղայից մինչև 110 տղա<sup>11</sup>: Միաժամանակ մշակվել և ընդունվել են գենդերային հավասարությունը խթանող մի շարք օրենսդրական և ռազմավարական փաստաթղթեր:

### Մարտահրավերները

Երկրում դրական միտումը պահպանելու և նորածինների սեռերի հարաբերակցությունը մինչև բնական մակարդակը նվազեցնելու համար դեռևս անհրաժեշտ է հաղթահարել կարևոր մարտահրավերներ՝

- Օրենքի կիրարկման և մշտադիտարկման մեխանիզմների ցածր մակարդակը
- Դեռևս գոյություն ունեցող սոցիալական ճնշումները
- Ավանդական գենդերային անհավասարությունները և նահապետական կարծրատիպերը:
- Տղաներին տրվող նախապատվության հնարավոր աճը՝ որպես հետևանք վերջերս Լեռնային Ղարաբաղի շուրջ տեղի ունեցած զինված բախումների և երիտասարդ տղաների կորստի
- Վաղ տարիքի երեխաների խնամքի ծառայությունների մատչելիության և առկայության պակասը:

Մանկական խնամքի հաստատությունների պակասի պատճառով կանայք երկար ժամանակ դուրս են մնում աշխատաշուկայից, սահմանափակվում է կանանց զբաղվածության և կարիերայի զարգացման հնարավորությունը՝ ի վերջո հանգեցնելով տնային տնտեսություններում որոշումներ կայացնելու նրանց կարողության նվազման: Զինված հակամարտությունները կարող են խթանել ավելի շատ տղաներ ունենալու ցանկությունը, քանի որ ռազմաճակատում ավելի մեծ թվով տղաներ են պետք:

Անհրաժեշտ է ապահովել տղաներին տրվող նախապատվության, պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության կանխարգելմանը և գենդերային հավասարության խթանմանն ուղղված նախաձեռնությունների շարունակականությունը:

### Քաղաքական երկխոսություն և գործընկերություն

- Շարունակել քաղաքականության շուրջ կառավարության և այլ շահագրգիռ կողմերի հետ երկխոսությունը՝ տղաներին տրվող նախապատվությունը կանխարգելելու և գենդերային հավասարությունը խթանելու համար
- Հետամուտ լինել տարբեր շահագրգիռ կողմերի (զարգացման գործընկերներ, միջազգային և տեղական ՀԿ-ներ) հետ համագործակցությանը՝ տղաներին տրվող նախապատվության և աղջիկների թերաբժևորման կանխմանն ուղղված ջանքերը միավորելու համար:

## Հուսալի տվյալների տրամադրում քաղաքականության մշակման համար

- Օժանդակել նորաձինների սեռային անհամամասնության և բնութագրիչների վերաբերյալ վիճակագրական աղբյուրների հետագա մշտադիտարկմանը և վերլուծությանը
- Օժանդակել նորաձինների շեղված սեռային հարաբերակցության առանձնահատկությունների, օրինակ՝ մարզային տարբերությունների վերաբերյալ ուսումնասիրությանը:

## Քարոզչություն և սոցիալական նորմերի փոփոխմանն ուղղված միջամտություններ

- Շարունակել տղաներին տրվող նախապատվության և աղջիկների թերարժեքման կանխարգելման, ինչպես նաև նորաձինների սեռային անհավասարակշռության վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքները
- Շարունակել աշխատանքը վերարտադրողական առողջության և ուլտրաձայնային հետազոտության ծառայություններ մատուցող բուժաշխատողների հետ՝ իրազեկելով նրանց պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության հետևանքների, ինչպես նաև կանխարգելման հարցում նրանց դերի մասին
- Ընդլայնել հավատահեն կազմակերպությունների մասնակցությունը հանրային իրազեկման քարոզարշավներին
- Ապահովել գենդերային հավասարության խթանման և պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության կանխարգելմանն ուղղված տեղեկատվության/ուղերձների տարածման միջոցների բազմազանությունը, օրինակ՝ հեռուստատեսություն, ռադիո, առցանց և տպագիր լրատվամիջոցներ, սոցիալական ցանցեր, ֆլեշ-մոբեր և այլն
- Շարունակել սոցիալական աշխատողների և ուսուցիչների վերապատրաստումները գենդերային հավասարության և տղաներին տրվող նախապատվության ու սեռով պայմանավորված խտրական ընտրության կանխարգելման վերաբերյալ:



- Երիտասարդ կնոջ շապիկի գրությունը հուշում է, որ նա աղջիկ է սպասում. Հանրապետական ծննդատուն:

Լուսանկարը՝ © ՄԱԿ Հայաստան 2017, Հիլթոն:

## Բարձրացնել հասարակության մեջ աղջիկների և կանանց արժևորումը

- Վերակերտել աղջիկ երեխայի կերպարը, կիրառելով գենդերային հարցերին արձագանքող ուղերձներ՝ աղջիկներին որպես հաղթող ներկայացնելու համար. տարածել հաջողակ դարձած կանանց պատմությունները սոցիալական ցանցերի և հաղորդակցման այլ միջոցների միջոցով
- Աշխատող կանանց ուսերից հանել կրկնակի բեռը, հորդորել հայրերին ներգրավվելու երեխաների խնամքին, բարելավել կանանց գիտելիքները իրենց իրավունքների վերաբերյալ:

### Տղաների նախապատվության և աղջիկների թերարժեքման կանխարգելմանը ուղղված գլոբալ ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ նպաստել Կովկասի (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) և Ասիայի (Նեպալ, Բանգլադեշ և Վիետնամ) ընտրված երկրներում նորաձինների սեռային անհամամասնության շտկմանը: Այդ նախատեսվում է իրականացնել տղաների նախընտրության, աղջիկների թերարժեքման և գենդերային անհավասարության վերացմանն ուղղված ապացուցահեն ազգային քաղաքականությունների և ծրագրերի հզորացման միջոցով:

### ՄԱԲՀ հայաստանյան գրասենյակ

Պետրոս Ադամյան 14  
Երևան 0010  
Հայաստան

Էլ-փոստ՝ [beglaryan@unfpa.org](mailto:beglaryan@unfpa.org)  
[www.unfpa.org](http://www.unfpa.org)